ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2019-7-1-Ա

ք. Երևան 25.07.2019թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2019 թվականի հուլիսի 25-ի նիստում քննարկեց 2019 թվականի հունիսի 20-ին արտոնագրային հավատարմատար Սարգիս Կնյազյանի կողմից ներկայացված՝ «Էմ Բի Ջի գրուպ» ՍՊԸ (Երևան, Մոսկովյան 28, 171 տարածք, ԱՄ) ընկերության բողոքը (No20181545) «ԱՋԱՊՍԱՆԴԱԼ» ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.
«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 7-րդ կետերի և ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (այսուհետ՝ կարգ) 93-րդ կետի 3-րդ, 7-րդ ենթակետերի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը բացառապես բաղկացած է այնպիսի նշումներից, որոնք առևտրում ծառայում են ապրանքի արտադրության կամ ծառայության մատուցման ժամանակը, ապրանքի կամ ծառայության տեսակը, որակը, քանակը, ստեղծման նպատակը, արժեքը, աշխարհագրական ծագումը կամ այլ բնութագրերը նշելու համար և որը սպառողներին կարող է մոլորությամ մեջ գցել ապրանքների կամ ծառայությունների աշխարհագրական ծագման, դրանց որակի, բնույթի կամ արտադրողի վերաբերյալ հարցերում: Տվյալ դեպքում հայտարկված նիշի գրանցումը ենթակա է մերժման, քանի որ բացառապես բաղկացած է «ԱՋԱՊՍԱՆԴԱԼ» բառից, որը 43-րդ դասի ծառայությունների մի մասի համար ունի նկարագրական բնույթ, քանի որ «Աջափսանդալ»-ը հանդիսանում է հատուկ բաղադրատոմսով պատրաստվող արևելյան և կովկասյան ուտեստի տեսակ և լայն կիրառություն ունի հանրային սննդի բնագավառում, իսկ մյուս մասի համար սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ծառայությունների բնույթի վերաբերյալ հարցերում:

Կոլեգիայի նախագահը կոլեգիայի քննարկման արդյունքները ներկայացնելիս նշեց, որ 43-րդ դասում նշված սննդի հետ առնչվող ծառայությունների համար «ԱՋԱՊՍԱՆԴԱԼ» ապրանքային նշանը ունի նկարագրական բնույթ, հետևաբար

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն այն չի կարող գրանցվել և ստանալ իրավական պահպանություն: Իսկ 43-րդ դասում նշված մնացած ծառայությունների համար կոլեգիան կարծում է, որ «ԱՋԱՊՍԱՆԴԱԼ» ապրանքային նշանի գրանցումը սպառողներին չի կարող մոլորության մեջ գցել ծառայությունների բնույթի վերաբերյալ հարցերում: Հետևաբար կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մասնակի բավարարելու, փորձաքննության որոշումը մասնակի չեղյալ ճանաչելու և ապրանքային նշանի վկայագիր տալու մասին:

Փորձաքննության բաժնի պետը նույնպես համաձայնվեց կոլեգիայի նախնական կարծիքի հետ:

Բողոքարկողի ներկայացուցիչը համաձայն չէր կոլեգիայի նախնական կարծիքի հետ և պնդում էր, որ ներկայացրած նշանը կարող է գրանցվել 43-րդ դասում նշված բոլոր ծառայությունների համար:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Բողոքը մասնակի բավարարել, փորձաքննության որոշումը մասնակի չեղյալ ճանաչել և «ԱՋԱՊՍԱՆԴԱԼ» (No20181545) ապրանքային նշանի վկայագիր տալ 43-րդ դասի հետևյալ ծառայությունների համար՝ տեղերի ամրագրմամբ (հյուրանոցներում, պանսիոններում) զբաղվող գործակալություններ. ժամանակավոր բնակատեղերի վարձակալում. պանսիոնների ծառայություններ. զբոսաշրջիկների համար տների ծառայություններ. հյուրանոցների ծառայություններ. տեղերի ամրագրում պանսիոններում. հանգստի ճամբարների, վրանների վարձույթ. խոհանոցային սարքերի վարձույթ. ժամանակավոր բնակեցման համար ընդունարանների ծառայություններ (ժամանման և մեկ նման կառավարում:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԱՎԱԳ ԱՎԱՆԵՍՅԱՆ